Ամսական տեղեկագիր
ՆՈՅԵՄԲԵՐ | 2024

Սրտանց արձագանք «Մենք ենք մեր սարերը» նախաձեռնությանը

Երկու օր առաջ, մեր կազմակերպության անդամները Տաթևում հիմնված նոր այգու ծառերից մեկի տակ հայտնաբերեցին Հայաստանի և Խորվաթիայի դրոշները:

Պարզվեց, որ «անակնկալի» հեղինակը Խորվաթ ճանաչված դաշնակահարուհի, երգեհոնահար, Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր, լրագրող և հրապարակախոս Էվա Կիրխմայեր Բիլիչն է, ով այս տարվա գարնանը մասնակցել է «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության նախաձեռնությանը «Կենաց ծառ» ծրագրի շրջանակներում տնկելու 1000 պտղատու ծառ Տաթևում: Նոր այգին հիմնվել է ի պատիվ Ռուբեն Վարդանյանի՝ իր ժողովրդի ու հայրենիքի բարօրության ու զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար և ի պաշտպանություն նրա բարեփոխող նախաձեռնությունների:

Էվա Կիրխմայերը «Կենաց ծառ» ծրագրի մասին տեղեկացել է համացանցից.

«Հենց տեսա, որոշեցի մասնակցել: Եվ ես թաքուն հույս ունեի ու խորապես ցանկանում էի մի օր տեսնել «իմ» ծառը, թեև դա ինձ անհավանական էր թվում:» - *«Մենք ենք մեր սարերը» կազմակերպության ուղղված նամակում իր հիշողություններով կիսվում է Էվան:*

Հայաստանի հետ նրա կապը սկսվել է 2019-ին, իր բնորոշմամբ՝ յուրահատուկ և անհավանական առաջին այցից:

«2019 թվականից հետևում եմ Հայաստանում իրավիճակին, ուսումնասիրում եմ նրա պատմությունը, և ինձ ամենաշատը զարմացրել է այն, որ ես ոչինչ չեմ սովորել Հայաստանի մասին դպրոցում, և նույնիսկ այսօր երեխաներս չեն սովորում այդ մասին:»

2020 թվականից սկած Էվան անհանգստությամբ հետևել է Արցախում տիրող իրավիճակին, փորձել օգնել: Արցախին նվիրված տեսահոլովակ է ձայնագրել, մասնակցելով Արցախի խաղաղության փառատոնին: ՀԲԸՄ ծրագրով սկսել է հայերեն սովորել:

2023-ին և 2024-ին հայ և խորվաթ արվեստագետների մասնակցությամբ համերգներ է ունեցել Գյումրիում և Երևանում, նվիրված հայ-խորվաթական բարեկամությանը: Նրա ակտիվ մասնակցությամբ հիմնվել է Հայ-խորվաթական հասմյնքը, իսկ 2024 թվականի ապրիլին Զագրեբում կազմակերպվել են առաջին Հայկական մշակույթի օրերը: Խորվաթիայի պատմության մեջ առաջին անգամ Զագրեբում Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգով պատարագ է մատուցվել:

«Հոկտեմբերի 16-ին, Զագրեբի Սուրբ Բլեզ եկեղեցում Սուրբ պատարագի ժամանակ աղոթքներին Ռուբեն Վարդանյանի համար: Անկեղծ հույս ունեմ, որ պարոն Ռուբենն ու իր գործընկերները շուտով ազատության մեջ կլինեն: Ես շատ եմ ցանկանում հանդիպել նրան:» - *ասում է Էվա Կիրխմայերը:*

Հոկտեմբերի կեսերին Էվան Երևանի «Գաֆեսյան» կենտրոնում «Ներդաշնակ բարեկամություն. Խորվաթիա և Հայաստան» երաժշտական ծրագրի դիտրն էր:
Հաջերգից հետո նա շտապել է Տաթև իրագործելու իր երազանքը՝ տեսնելու իր ծառը: Այն 696-րդն էր նոր տնկված 1000 ծառերի մեջ:

«Երբ ես իջա ճոպանուղուց, սկսեցի որոնել և հենց տեսա հանարները ցուցանակների վրա, հասկացա, որ մոտ եմ ու սկսեցի վազել գտնելու իմ ծառը... Չեմ կարող նկարագրել այն ուրախությունը, որ զգացի, երբ տեսա 696 թիվը, սկսեցի բղավել, թռչկոտել, վազել... Որոշեցի երիտասարդ ծառի կողքին որոշներ դնել... սկսեցի լաց լինել, գրկել ծառը... Մոտածեցի պարոն Ռուբենի և բոլոր այն մարդկանց մասին, ովքեր նախաձեռնել են ծառատունկը Տաթևի այս առավել քան գեղատեսիլ տարածքում, վանքի հարևանությամբ: Ես հասկացա, որ պետք է նորից ու նորից վերադառնամ, որպեսզի տեսնեմ, թե ինչպես է աճում իմ ծառը և պարբերաբար նոր դրոշներ բերեմ: Ես հասկացա, որ այժմ ունեմ իմ և խորվաթիայի իմ փոքրիկ կողմը՝ Հայաստանում: Այս զգացողությունն ինձ ավելի մոտեցրեց Հայաստանին և զգացի, որ ես այստեղ եմ... Շնորհակալ եմ ձեր աջակցության համար, և անհամբեր սպասում եմ 2025-ին Տաթևում բոլորիդ հետ կիսվելու նրաժշտությամբ, պատմությամբ և հույսով:

Էվայի թողած դրոշները և ծառը մեծ սիմվոլներ են, որոնք միասնության, հույսի և ընդհանուր մշակութային ժառանգության մեծ ուղերձ ունեն:

Եթե դուք նույնպես մասնակցել եք «Կենաց ծառ» ծրագրին, ապա կարող եք տեսնել Ձեր ծառը այս հղումով: Ծառերի լուսանկարները կթարմացվեն վեցամսյա պարբերականությամբ:

«Մենք ենք մեր սարերը» կազմակերպությունն իրականացնում է ծրագրեր ուղղված Արցախից բռնի տեղահանվածներին աջակցությանը, Արցախի մշակութային ժառանգության պահպանմանը, ինչպես նաև. զարգացման ծրագրեր Հայաստանի Սյունիքի մարզում: Իմանալ ավելին

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել info@ourmountains.am.

ԱՋԱԿՑԵԼ